


Հաստատում եմ՝
Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի
Կոլեգիալ կառավարման խորհրդի
թիվ 2 / 05. 02. 2024 թ. նիստում
խորհրդի նախագահ՝  Ա. Աթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
/պետական ոչ առևտրային կազմակերպություն/

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» -ի ԵՎ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Ք. Գյումրի
2024թ.

Ընդհանուր դրույթներ

ՀՀ ԿԳՄՆ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ ՇՏՊՔ) և ՀՀ պետական, մասնավոր, ընկերությունների և ձեռնարկությունների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների (այսուհետ՝ Ձեռնարկությունների)

հետ համագործակցությունը ՇՏՊԲ-ի խորհրդակցական մարմին է (այսուհետ՝
Խորհուրդ):

1. Խորհրդի նպատակներն ու խնդիրները

2.1 Ընդլայնել ՀՀ աշխատաշուկայում զգալի դերակատարությունը ունեցող ՀՀ պետական, մասնավոր, ընկերությունների և ձեռնարկությունների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների (այսուհետ՝ Ձեռնարկությունների) հետ համագործակցության շրջանակը և ապահովել բազմակողմանի փոխգործակցություն,

2.2 մշակել և իրականացնել քոլեջի ուսանողների կարիերայի խնդիրներին առնչվող ծրագրեր և միջոցառումներ,

3. Խորհրդի գործառույթները

ա) Քոլեջի և Ձեռնարկությունների փոխգործակցության մշակում, համապատասխան ծրագրերի իրականացում:

բ) Քոլեջի ԱՀՈՒ ուսանողների դուալ կրտության պրակտիկայի կազմակերպման աշխատանքներին աջակցության ցուցաբերում,

գ) Ձեռնարկությունների տվյալների բազայի ստեղծում,

դ) Քոլեջի և Ձեռնարկությունների միջև համագործակցության վարչակազմակերպչական, ֆինանսական և այլ հարցերի քննարկում և լուծում,

ե) Քոլեջի անձնակազմի և Ձեռնարկությունների հետ խորհրդատվությունների անցկացում, նպատակային հետազոտությունների իրականացում,

զ) թափուր աշխատատեղերի և ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող միջոցառումների մասին տեղեկատվության տարածում:

է) Քոլեջի կրթական ծրագրերի վերաբերյալ խորհրդատվություն, առաջարկություններ, անմիջական մասնակցություն ելնելով աշխատաշուկայի կարիքներից:

4. Խորհրդի կառավարումը

4.1 Խորհրդի նախագահը ի պաշտոնե՝ քոլեջի տնօրենն է: Խորհրդի կազմում կարող են առաջադրվել կարիերայի կենտրոնի ղեկավարը, որակի կենտրոնի պատասխանատուն, մասնագիտական առարկայական հանձնաժողովների նախագահները, պրակտիկայի վարիչը, պրակտիկայի ղեկավարները և

դասախոսական անձնակազմի այլ ներկայացուցիչներ, ձեռնարկությունների կամ նրանց միավորումների ներկայացուցիչներ:

4.2 Խորհրդի քարտուղարը ընտրվում է խորհրդի կողմից:

4.3 Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության տնօրենի կողմից՝ առնվազն կիսամյակը¹ անգամ կամ ըստ անհրաժեշտության:

4.4 Խորհրդի անդամների ընդհանուր թիվը սահմանվում է խորհրդի կողմից: Խորհրդի անդամների ազնվազն 1/3 -ը պետք է լինեն ձեռնարկությունների ներկայացուցիչներ:

4.5 Խորհրդի ամբողջական կազմը ենթակա է փոփոխման, որոշակի կրթական ծրագրերում փոփոխությունների անհրաժեշտությունից ելնելով:

4.6 Խորհրդի կազմը կարող է վերանայվել ըստ անհրաժեշտության:

4.7 Խորհրդի նիստերն արձանագրվում են, արձանագրության վարումը իրականացնում է Խորհրդի քարտուղարը:

4.8 Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող աշխատակիցներ: